ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/112

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 14.01.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2021թ. թիվ 26/26-1/6114-2021 գրությամբ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 16.04.2021թ. թիվ 274 գրության հիման վրա, 22.04.2021թ. թիվ 26/26-1/6114-2021 գրությամբ նախաձեռնել է «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն 30.04.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«1.1. «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով 11.03.2021 թվականին հրապարակել է թիվ «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/25» գնանշման հարցումը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել նաև «ՍՍՈՒԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից) և ընտրված մասնակից է ճանաչվել 2-րդ; 4-րդ; 5-րդ և 8-րդ չափաբաժիններով:

1.3. Պատվիրատուն պայմանագիր կնքելու որոշմամբ սահմանել է անգործության ժամկետ՝ նույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ: Նշված հայտարարությունը հրապարակվել է 22.03.2021 թվականին: Անգործության վերջնաժամկետն էր 29.03.2021 թվականին: 30.03.2021 թվականին Պատվիրատուն Մասնակցին էր ուղարկել գնման ընթացակարգի 2-րդ; 4-րդ; 5-րդ և 8-րդ չափաբաժիններով պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

1.4. Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները Պատվիրատուին է ուղարկել սահմանված ժամկետում՝ 13.04.2021 թվականին, փոստային առաքմամբ:

1.5. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.04.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ անօրինական եղանակով զրկեց մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից:

1.6. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2021 թվականին նախաձեռնվել է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Պայմանավորված նշվածով պետք է փաստել, որ սույն պարզաբանման է ենթակա այն հարցադրումը, թե արդյոք մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, թե ոչ:

Սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից զրկել է հիմք ընդունելով այն հանգամանքը, թե իբր սահմանված ժամկետում չի ներկայացրել կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Վերոհիշալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջելու կատարել իր պարտականությունը: Ընդ որում, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, հակառակ դեպքում

պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Ուստի պարտատիրոջ պահանջի սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է պարտապանի՝ պարտավորությունը պատշաճ կատարելու պարտականությունը:

Սույն դեպքում Պատվիրատուի 30.03.2021 թվականի պահանջի իրավունքին ի պատասխան մասնակցի կողմից սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, այսինքն ստանձնած պարտավորությունը մասնակցի կողմից կատարվել է պատշաճ սահմանված ժակետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: (...):

2. Կապի կազմակերպությանը մինչև ժամկետի վերջին օրվա ժամը տրված գրավոր դիմումները և ծանուցումները համարվում են ժամկետին տրված:

Սույն իրավական նորմերի և գործի փաստերի համադրության արդյունքում պետք է փաստել, որ Պատվիրատուի կողմից Մասնակցին ուղղված՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնեու Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջի վերջնաժամկետն էր 13.04.2021 թվականը և այդ օրը կապի կազմակերպության միջոցով ուղարկված փաստաթղթերը համարվում են ուղարկված սահմանված ժամկետում և ինչ կերպ է Պատվիրատուն 13.04.2021 թվականին՝ կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները ուղարկելը դիտարկել ժամկետի խախտմամբ ուղարկված անհասկանալի է:

Վերոգրյալով պայմանավորված պետք է փաստել, որ Մասնակիցը հրավերով ստանձնած պարտավորությունները կատարել է սահմանված ժամկետներում և Պատվիրատուն ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից: Իսկ ստանձնած պարտավորության խախտման

բացակայությունը բացառում է Մասնակցին գնումների գործընթացում ներառելու հիմքերը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/112 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.04.2021թ. թիվ 274 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգենիկ և լվացքի միջոցների ձեռք բերելու նպատակով գնանշման հարցման ձևով գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/25 ծածկագրով մրցույթին 16.03.2021թ. էլեկտրոնային եղանակով հայտ էր ներկայացրել նաև «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. թիվ 2 որոշմամբ 2-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից էր հայտարարվել «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետով, 30.03.2021թ. «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին էր ներկայացրել ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/25-1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի պայմանագրի նախագիծը, որակավորման ապահովումը, պայմանագրի ապահովումը և առաջարկել հաստատել այն և հրավերով նախատեսված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ:

«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում և կարգով ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը:

«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրն ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ է ներկայացվել 14.04.2021թ. Հայփոստի միջոցով մեկ օր ուշացումով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/112 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/112 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.03.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկվելով 10 աշխատանքային օրվա ընթացքում «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ ներկայացնել որակավորման, պայմանագրի կատարման ապահովումների և ուղեկցական գրության հետ միասին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի ստորագրել

պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման ու պայմանագրի ապահովումները և որոշում է կայացրել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.04.2021թ. թիվ 26/26-1/6114-2021 գրությունը, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 16.04.2021թ. թիվ 274 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի 30.04.2021թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Այսպես, «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.03.2021թ. էլեկտրոնային եղանակով «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկվելով 10 աշխատանքային օրվա ընթացքում «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ ներկայացնել որակավորման, պայմանագրի կատարման ապահովումների և ուղեկցական գրության հետ միասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման ու պայմանագրի ապահովումները և որոշում է կայացրել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.04.2021թ. թիվ 274 գրությամբ հայտնել է, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրը «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին է ներկայացվել 14.04.2021թ. «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով մեկ օր ուշացումով, իսկ այնուհետև՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջով տրամադրել է Ընկերության կողմից փոստային ծառայությանը հանձնված ծրարի և ծրարում ներառված փաստաթղթերի լուսապատճենները, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները՝ կից գրությամբ ***«Հայփոստ» ՓԲԸ-ին հանձնվել է 13.04.2021թ.:***

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին պայմանագրի նախագիծը՝ 30.03.2021թ. ներկայայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 31.03.2021թ. և լրացել 13.04.2021թ.ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին «Հայփոստ» ՓԲԸ-ին հանձնվել են սահմանված ժամկետի պահպանմամբ:

Ուստի՝ նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը, որպես ընտրված մասնակից, չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 22.04.2021թ. թիվ 26/26-1/6114-2021 գրությամբ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**